



# ԱՊԱՐԱՆԻ ՕՐՀՈՒՍ ԿԵՆՏՐՈՆ

«Աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը լուծել բնապահպանական խնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և քՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները» N UB 4200665

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆՎԱՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ  
2015թ



• Ծրագիրն իրականացնում է «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան և ընդհանուր տեղեկություններ - - - - - 3-5 էջ
2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների ,  
 Ծրագրի առաջադրանքերը, Գործունեություն 1.1  
 - Գործողություն 1.1.1 - - - - - 6-9 էջ  
 - Գործողություն 1.1.2 - - - - - 9-12 էջ  
 - Գործողություն 1.1.3 - - - - - 13-15 էջ  
 - Գործողություն 1.1.4 - - - - - 16-18 էջ
3. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները - - - - - էջ
4. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ - - - - - 18-19 էջ
5. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ - - - - - էջ 9
6. Ծրագրի գնահատում և շարունակականություն - - - - - էջ
7. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ - - - - - էջ
8. Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր - - - - - էջ



## Գործունեության 2015թ. տարեկան հաշվետվություն

### 1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ



Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2015թ.գործունեությունն ըստ պայմանագրի սկսել է մարտի 1-ից, «Աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը շրջակա միջավայրի խնդիրները լուծելու գործընթացում՝ ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները» ծրագրի շրջանակում:

Հաշվետու տարվա ընթացքում Ապարանի Օրհուս կենտրոնի իրականացրած գործողությունների հիմնական նպատակն է եղել աջակցել կառավարությանը եւ քաղաքացիական հասարակությանը համատեղ ուժերով լուծել բնապահպանական հիմնախնդիրները, ամրապնդելով պետական մարմինների և ՔՀԿ-ների Օրհուսի կոնվենցիայի իրականացման կարողությունները, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն գործողություններին, որոնք ուղղված են հանրության իրազեկության և որոշումների կայացման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Հիմք ընդունելով կենտրոնի 2015թ. տարեկան աշխատանքային ծրագրի նպատակները, տեխնիկական առաջադրանքի պահանջները, կենտրոնը իրականացրել է իր աշխատանքները, ուշադրության կենտրոնում պահելով մեր տարածաշրջանի նախորդ՝ 2014 թ նախանշված գերակա խնդիրները՝ հանքարդյունաբերությունը, հիդրոէներգետիկան, թափոնների կառավարումը, բնակչության էկոլոգիությունը:

Հաշվետու ժամանակահատվածում Օրհուս կենտրոնն ինքնուրույն, նաև համագործակցելով այլ կազմակերպությունների հետ, իրականացրել է մեկ տասնյակից ավելի միջոցառումներ՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի և խավերի ներկայացուցիչների համար՝ էկո-կրթական սեմինարներ, Օրհուսի կոնվենցիայի հիմնադրույթների լուսաբանման դասընթացներ, քննարկումներ, հանդիպումներ, այցելություններ, մասնակցություն հասարակական լսումների և այլն:

Ստորև ներկայացվում է կենտրոնի իրականացված միջոցառումների բաշխումն ըստ տարատեսակների

| Միջոցառում  | Քանակ   |
|---|---------|
| Ընդամենը իրականացված միջոցառումներ                          | 28 + 20 |
| Այդ թվում.  |         |
| Տեղեկատվության մատչելիությանն ուղղված                       | 17      |
| Հասարակական և կյոր սեղան-քննարկումներ                       | 2       |
| Հանրային լսումներ   | 2       |
| Գործնական աշխատանքներ և արձագանքներ                         |         |
| Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ  | 8       |
| Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոլոգիական միջոցառումներ | 4       |
| Շնորհանդեսներ   | 4       |
| Միջազգային հանդիպումներ, սեմինարներ                         | 2       |
| Փորձագիտական խորհրդի նիստեր                                 | 2       |

- ❖ Հաշվետու ժամանակահատվածում Օրհուս իրականացրած միջոցառումներին մասնակցել է **239** մարդ, որից կանայք՝ **124**, տղամարդիկ՝ **115**:
- ❖ Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ կենտրոնը համագործակցել է տեղական իշխանությունների, հասարակության ակտիվ ներկայացուցիչների, երիտասարդների, հասարակական կազմակերպությունների հետ:
- ❖ Կենտրոնը մասնակցել է հասարակական լուսմների և աշխատել է ազդակիր համայնքների բնակչության մասնակցությունը խթանելու ուղղությամբ:
- ❖ Կենտրոնը հետևել է [www.mnp.am](http://www.mnp.am) կայքում դրվող հայտարարություններին, տեղեկատվություն է տարածել լուսմների վերաբերյալ, հասարակայնության համար անցկացրել խորհրդատվական հանդիպումներ:
- ❖ Կենտրոնի կողմից տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղղվել ՀՀ Բնապահպանության, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, ՀՀ Գյուղատնտեսության նախարարություններ, Արագածոտնի մարզի բնապահպանության վարչություն և տեսչություն, կապված Թուխմանուկի ոսկու հանքավայրի տարածքում իրականացվող շնարարական աշխատանքների, Արագած համայնքում՝ Գեղարոտ գետի ջրի որակի փոփոխության, Ապարանի ջրամբարում ձկների անկման, Արագած համայնքում կարտոֆիլի հիվանդության վերաբերյալ:
- ❖ Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են այցելություններ Մելիքյուղ, Արագած, Մուլքի, Երնջատափ, Նորաշեն համայնքներ, Ապարանի ջրամբար, հանդիպումներ են տեղի ունեցել բնակիչների, համայնքի ղեկավարների հետ, քննարկվել առաջացած խնդիրները, տրամադրվել է դրանց վերաբերող պատկան մարմինները ստացված տեղեկատվությունը:
- ❖ Կենտրոնի ուշադրության կենտրոնում են եղել համայնքի աղբահանության, ջրային ռեսուրսների աղտոտման /Քասաղ գետ/, հարցերը: Այդ ուղղությամբ մի շարք հանդիպումներ են եղել համայնքի ղեկավարության, ՏԻՄ ներկայացուցիչների հետ, քննարկվել են խնդիրները, դրանց լուծման ուղիները:
- ❖ Ապարանի Օրհուս կենտրոնը համագործակցել է ԶԼՄ-ների հետ: Կենտրոնի համակարգող տեղեկատվություն և հարցազրույց է տրամադրել լրագրողներին Թուխմանուկի ոսկու հանքավայրի, Ապարանի ջրամբարում ձկների անկման, Գեղարոտ գետի ջրի որակի փոփոխության վերաբերյալ : Կենտրոնի կողմից իրականացվել է լրագրողների հրապարակումների ու հոդվածների տարածում : Տեղակատվության տրամադրման և **հաղորդումների հղումներն ստորև**.

5.Հունիս.2015.

<http://news-book.am/?p=58694/hanqavayri+shahagorcumy+bacasakan+azdecutyun+e+toxnum+meliq+gvuxi+hoxerivoraki+vra+bnapahpan&l=am>

13:14 - 08.Հունիս.2015

<http://news-book.am/?p=58871/ahazang+kavor+hanqavayrum+texnika+e+ashxatum+aparani+orhus+kentroni+hamakargox&l=am>

11:18 - 21.Մայիս.2015.

<http://news-book.am/?p=57464/bnakichnery+geti+guyni+popoxutyuny+dra+vra+karucvac+poqr+hek-i+het+en+kapum&l=am>

Ապարանի ջրամբարի ափամերձ հատվածում ձկների անկման դեպք է եղել

<http://news-book.am/?p=58328/aparani+jrambari+apamerdz+hatvacum+dzkneri+ankman+depg+e+exel&l=am>

06.08.2015 15:28 epress.am

<http://www.epress.am/2015/06/08/%D5%A2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A5%D5%A6%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%81-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%B8-%D5%A7%D5%AC-%D5%B0.html>

09.09.2015. Հանրային քննարկում Մելիքյուղում /8.10րոպեից/

[http://www.shanttv.com/ru/news/political/2015\\_09\\_09/17026/](http://www.shanttv.com/ru/news/political/2015_09_09/17026/)

<http://www.ecolor.org/hy/news/mining/quotit-wont-work-and-thats-it-quot-meliqgyugh-villagers-once-again-rejected-tukhmanuk-mining-project-photos/7635/>

Երկու շաբթի, 28 Մե սյունիք 2015.

<http://aratnews.am/sute-sti-hete%D6%82ic-melikhgyugh-lusankarner/>

- ❖ Կենտրոնում անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես տարածվել է [www.aarhus.am](http://www.aarhus.am) , [Facebook.com](https://www.facebook.com/aarhus.am) և այլ կայքերի, լրատվական թերթիկների միջոցով:
- ❖ Կենտրոնի գործունեության կարևոր մաս է հանդիսանում բնակչությանը որոշակի ծառայությունների տրամադրումը: 2015թ. առաջին կիսամյակի ընթացքում կենտրոնի գրադարանից և ֆիլմադարանից, պատճենահանումից, տրամադրած խորհրդատվությունից օգտվողների թվաքանակը կազմել է **102 քաղաքացի**:
- ❖ Կենտրոնի տարածքը տրամադրվել է այլ կազմակերպությունների դասընթացներ, քննարկումներ անցկացնելու համար: Օրինակ՝ 14.07.2015թ կենտրոնում << Արագած Հիմնադրամի>> ( <http://www.aragats.org/#!ahc-arm/c16fi> ) նախաձեռնությամբ և Ապարանի Օրհուս կենտրոնի աջակցությամբ կազմակերպվեց քննարկում համայնքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ:
- ❖ Օրհուս կենտրոնը ժամանակին եռամսյակային հաշվետվություններ, ամսեկան աշխատանքային պլաններ է ներկայացրել ծրագրի ղեկավարին: Կենտրոնի կողմից ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համառոտ հաշվետվություն և նյութեր են ներկայացվել (միջոցառման արձանագրություն, լուսանկար, գրանցման թերթիկ, շնորհանդես և այլն) ծրագրի ղեկավարին և PR մենեջերին՝ ըստ սահմանված կարգի: Կենտրոնի իրագործված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես տարածվել է [www.aarhus.am](http://www.aarhus.am) , [Facebook.com](https://www.facebook.com/aarhus.am)՝ **համացանցի սոցիալական խմբերում**, և այլ կայքերի միջոցով:



## 2. Ծրագրի իրագործումն ըստ դրված նպատակների.

### Ծրագրի առաջադրանքները

**Գործունեություն 1.1:** Օրհուս կենտրոնները Հայաստանում շարունակելու են բարձրացնել իրազեկությունը և արձագանքել բնապահպանական մարտահրավերներին եւ սպառնալիքներին՝ տրամադրելով հանրությանը լայնածավալ բնապահպանական տեղեկատվություն. Օրհուս կենտրոնները պետք է ապահովեն քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը բնապահպանական կառավարման եւ որոշումների կայացման գործընթացներում, առաջարկեն արդյունավետ համագործակցության հարթակ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև:

**Գործողություն 1.1.1** Օրհուս կենտրոնները պետք է հավաքեն եւ տարածեն բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ կապված տեղեկատվություն՝ աղտոտված ջրի և քաղաքային միջավայրի օդի վերաբերյալ, հանքարդյունաբերական վայրերին մոտ և այլ բնապահպանական խնդիրներ. պետք է բարձրացնեն հանրային մասնակցության արդյունավետությունը, զարգացնեն բաց վարչական մշակույթ որն աջակցելու է հասարակության մասնակցությունը եւ թափանցիկությունը բնապահպանական հարցերում, գնահատեն դրանք որպես դրական ներդրում ժողովրդավարական, արդյունավետ և լավ կառավարման համար:

### Ենթագործողություն 1/1

**Հավաքագրել տեղեկատվություն կապված բնապահպանական և առողջապահական ռիսկերի հետ, որոնք առաջացնում են քաղաքային միջավայրում աղտոտված ջրից և օդից, հանքարդյունաբերական օբյեկտների մոտ և այլ բնապահպանական թեժ կետերում**

#### 1/1.1 Կատարված քայլեր

Կենտրոնը շուրջ **100** հարցումներ է ուղղել պատկան մարմիններին, հավաքագրել տեղեկատվություն շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող կամ շրջակա միջավայրում պլանավորվող գործողությունների հնարավոր ազդեցության վերաբերյալ, տրամադրել ՋԼՄ-ներին ու տարածել կենտրոնների ինտերնետային կայքի, սոցցանցերի ու էլեկտրոնային փոստի հասցեների միջոցով:

Հարցումների մեծ մասն ուղղված են եղել Բնապահպանության, Առողջապահության, Գյուղատնտեսության, Էներգետիկայի և բնական պաշարների, Տարածքային կառավարման ու արտակարգ իրավիճակների նախարարություններին, տարածքային կառավարման մարմիններին ու ՏԻՄ-երին, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների:

- Ապարանի կենտրոնը Ապարանի ջրամբարում ձկների անկման հետ կապված տեղեկացրել է Մարզի բնապահպանության վարչությանը և տեսչությանը, հարցումներ ուղղել համապատասխան մարմիններին, կազմակերպել այց, տեղում պարզելու թե ձկների զանգվածային անկման մասին ահազանգը համապատասխանում է իրականությանը, նաև անկախ փորձագետի աջակցությամբ կատարվել է ջրի լաբորատոր հետազոտություն, հետազոտության արդյունքների մասին տեղեկատվություն տրամադրել բնակչությանը:



- Ապարանի կենտրոնը Արագած համայնքում կարտոֆիլի հիվանդության մասին տեղեկատվություն ստանալու, Կարտոֆիլի քաղցկեղ սնկային հիվանդության տարածումը կանխարգելելու՝ համայնքի բնակիչներին իրազեկելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով հարցում է ուղղվել Գյուղատնտեսության նախարարություն (**հարցում, պատասխան , [http://aarhus.am/?page\\_id=9985](http://aarhus.am/?page_id=9985)**) կազմակերպվել է այցելություն Արագած համայնք, նախարարությունից ստացված տեղեկատվությունը տրամադրվել է շահագրգիռ բնակչությանը ,
- Ապարանի կենտրոնը Մելիքյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրում ընկերության կողմից իրականացվող ապօրինի շինարարական աշխատանքների մասին տեղեկացրել է Մարզի բնապահպանության վարչությանը և տեսչությանը, հարցումներ ուղղել համապատասխան մարմիններին, ստացված տեղեկատվություն տրամադրել բնակչությանը:
- Ապարանի կենտրոնը ելնելով Արագած համայնքի բնակիչների մտահոգությունից, Գեղարոտ գետի ջրի գույնի փոփոխության վերաբերյալ հարցումներ է ուղղել պետական համապատասխան կառույցներին և **ստացված տեղեկատվությունը տրամադրել է համայնքի ղեկավարությանը և բնակիչներին:** Համայնքի ղեկավարին է տրամադրվել նաև անկախ փորձագետի կողմից կատարված Գեղարոտ գետի ջրի լաբորատոր հետազոտության վերաբերյալ նյութերը: **[http://aarhus.am/?page\\_id=10079](http://aarhus.am/?page_id=10079)**

**1/1.2 Ձեռք բերված արդյունքներ**

- ◆ Ապարանի ջրամբարում ձկների անկման հետ կապված ահազանգից հետո Մարզի բնապահպանության վարչության և տեսչության կողմից կատարվել են տեսչական ստուգումներ.



Բոլոր հարցումներն ու պատասխաններն ըստ ամսաթվերի և ըստ կենտրոնների, հայերեն տարբերակով կարելի է տեսնել հետևյալ հղումով **[http://aarhus.am/?page\\_id=132](http://aarhus.am/?page_id=132)** :

- ◆ Մելիքյուղի Թուխմանուկի ոսկու հանքավայրում << Մեզո Գոլդ>>ընկերության կողմից իրականացվող ապօրինի շինարարական աշխատանքների մասին տեղեկացնելուց հետո , Մարզի բնապահպանության վարչության և տեսչության կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ:



**[http://aarhus.am/?page\\_id=10521](http://aarhus.am/?page_id=10521)**

- ◆ Ապարանի կենտրոնը Արագած համայնքում կարտոֆիլի հիվանդության մասին ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունից տեղեկատվություն ստանալուց հետո Ապարանի ԳԱՄԿ-ի (Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն) հետ համատեղ կազմակերպվել է այց Արագած համայնք, տեղի ունեցել հանդիպում գյուղի բնակիչների, համայնքապետի հետ, որոնց ԳԱՄԿ-ի մասնագետի կողմից տրամադրվել է Գյուղատնտեսության նախարարությունից ստացված հիվանդության կանխարգելմանը վերաբերող խորհրդատվություն և տեղեկատվական թերթիկներ:
- ◆ Ապարանի կենտրոնի և Ապարանի ԳԱՄԿ-ի կողմից Օրհուս կենտրոնում կարտոֆիլի հիվանդության կանխարգելման նպատակով անցկացվել է իրազեկման դասընթաց կարտոֆիլի մշակությամբ զբաղվող համայնքի բնակիչների և ՏԻՄ համապատասխան բաժինների ներկայացուցիչների մասնակցությամբ:



[http://aarhus.am/?page\\_id=9985](http://aarhus.am/?page_id=9985)

15.05.2015. Համատեղ գործողություններ կարտոֆիլի հիվանդության կանխարգելման ուղղությամբ:



[http://aarhus.am/?page\\_id=9985](http://aarhus.am/?page_id=9985)

- ◆ Ապարանի Օրհուս կենտրոնը այցելել է Արագած համայնք, Գեղարոտ գետի ջրի գույնի փոփոխության վերաբերյալ Արտակարգ իրավիճակների և Բնապահպանության նախարարություններից ստացված տեղեկատվությունը տրամադրել է համայնքի ղեկավարությանը և բնակիչներին:

Համայնքի ղեկավարին է տրամադրվել նաև անկախ փորձագետի կողմից կատարված Գեղարոտ գետի ջրի լաբորատոր հետազոտության վերաբերյալ նյութերը:

[http://aarhus.am/?page\\_id=10079](http://aarhus.am/?page_id=10079)







### Ենթագործողություն 1/2

Առաջարկել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ.

#### 1/2.1 Կատարված քայլեր

Մերտ համագործակցություն է ձևավորվել Ապարանի Օրհուս կենտրոնի և մի շարք բնապահպանական ՀԿ-ների՝ Էկոդաշինք», «Կանաչների միություն» , «Բնության համար» բնապահպանական ՀԿ, ԵՊՀ կայուն զարգացման կենտրոն, EcoLur , փորձագետների, գիտական ոլորտի ներկայացուցիչների միջև՝ Ապարանի շրջանի համայնքներում առկա բնապահպանական խնդիրների վերհանման, դրանց լուսաբանման ու իրազեկման միջոցառումների իրականացման և այդ խնդիրների լուծմանն աջակցելու ուղղությամբ:



[http://aarhus.am/?page\\_id=12496](http://aarhus.am/?page_id=12496)

#### 1/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Գործընկերային կապերի հաստատման նպատակն է՝ աջակցել կենտրոնին Մելիքյուղի, ինչպես նաև եզդիական Միրաք, Ռյա Թագա, Ալազյազ համայնքների բնակչության իրավունքների ու շահերի, Էկոլոգիական իրավունքի գրագետ պաշտպանության հարցերում, կենտրոնին՝ փորձագիտական ու մասնագիտական խորհրդատվության տրամադրման, գիտականու տեխնիկական տեղեկատվության, փաստաթղթերի ու հետազոտությունների արդյունքների փոխանակման, անկախ փորձաքննության անցկացման, Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրին առնչվող խնդիրների վերաբերյալ դիտողությունների ու առաջարկությունների ներկայացման գործում:

### Ենթագործողություն 1/3

Հարթակ տրամադրել՝ ապահովելու համար հասարակության մասնակցությունը հանրային լսումների, սեմինարների, բանակցությունների և միջնորդությունների

#### 1/3.1 Կատարված քայլեր

Կենտրոնը , աջակցել է այլ կազմարեպություններին հանրային լսումներին մասնակցելու, տեղեկացրել է դրանց տեղի ունենալու օրվա և ժամի մասին, իրազեկել է հանրությանը կենտրոնների կայքի, էլ. հասցեների, սոցցանցերի միջոցով:



19.06.2015. հանրային քննարկում Մելիքյուղում  
[http://aarhus.am/?page\\_id=10735](http://aarhus.am/?page_id=10735)



12.09.2015. հանրային քննարկում Մելիքյուղում  
[http://aarhus.am/?page\\_id=10735](http://aarhus.am/?page_id=10735)



**1/3.2 Ձեռք բերված արդյունքներ**

Օրհուս կենտրոնի աջակցությամբ Մելիքյուզ համայնքի բնակիչները, ՀԿ-ների, Ազգային ժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի, ԶԼՄ ներկայացուցիչները տեղեկացվել են հանրային լսումների տեղի ունենալու մասին, շրջակա միջավայրում նախատեսվող գործողությունների մասին, Օրհուս կենտրոնի միջոցով անկախ փորձագետների, գիտական ոլորտի ներկայացուցիչների առաջարկությունները, դիտողությունները ներկայացվել են պատկան մարմիններին, հանքը շահագործող <<Մեգո-Գոլդ>> ՍՊԸ>>-ին::

**Ենթագործողություն 1/4**

Ըստ անհրաժեշտության աջակցել ՇՄԱԳ գործընթացին տեղեկատվության տարածման միջոցով՝ ստեղծելով պայմաններ ապահովելու համար հասարակության մասնակցությունը,

**1/4.1 Կատարված քայլեր**

- Ապարանի Օրհուս կենտրոնը «Մեգո-Գոլդ» ՍՊԸ Թուխմանուկի հանքարդյունահանման համալիրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերագինման, պոչամբարի պաշտպանիչ պատնեշի և չոր պոչանքների պահեստարանի կառուցման նախագծի մասին փորձագետների մանրակրկիտ մասնագիտական վերլուծությունները՝ Նախագծը և նախագծի մասին տեղեկատվությունը տարածել է շահագրգիռ հանրության շրջանում, աջակցել հանրությանը պատշաճ իրազեկմանը
- Հաշվետու տարում ՇՄԱԳ գործընթացներն ավելի թափանցիկ դարձնելու նպատակով, ծրագրի ղեկավարի հանձնարարությամբ, Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգողն տարածաշրջանում տեղի ունեցող հասարակական լսումների մասին ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական [www.mnp.am](http://www.mnp.am) կայքում տեղադրված հայտարարությունն ուղարկել է ծրագրի ղեկավարին, ուղարկել է նաև ՇՄԱԳ-ի նախագիծը:

**1/4.2 Ձեռք բերված արդյունքներ**

- Հավաքագրվել են առաջարկներ՝ նախագծում ներառելու համար, անկախ փորձագետների (ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ, երկրաբան Հարություն Մովսիսյանի, Էկոլոգ-իրավաբան Նազելի Վարդանյանի, Էկոքիմիկոս Մեյրան Մինասյանի) վերլուծությունները հասարակական լսման ժամանակ տրամադրվել ՀՀ բնապահպանության նախարարություն «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետին :
- Արդյունքում, երկխոսությամբ, բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ բոլոր խնդիրները հայտնվել են ԶԼՄ-ների ուշադրության կենտրոնում: Ինչպես նաև քննարկման ընթացքում բարձրացված և անպատասխան մնացած հարցերի վերաբերալ պատրաստվել են ինտերվյուներ անկախ փորձագետների հետ ու տեղադրվել Aarhus TV-կայքում:

Շանթ TV-ի և EcoLur-ի հանրային քննարկումների տեսանյութերի հղումները ստորև.

<https://www.youtube.com/watch?v=LDJC4jilC88>

[http://www.shanttv.com/ru/news/political/2015\\_09\\_09/17026/](http://www.shanttv.com/ru/news/political/2015_09_09/17026/) (8ր 11վ-ից):

**Ենթագործողություն 1/5**

**Նպաստել Օրհուսի և մյուս բնասպահական կանոնակարգի համատեղ գործողությունների իրականացմանը**

**1/5.1 Կատարված քայլեր**

**24.08.2015.** Կենտրոնը համագործակցել է Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ-ի հետ, և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ-ի նախաձեռնությամբ կենտրոնում անցկացվել է դասընթաց , որի նպատակն էր աջակցել հասարակության քաղաքացիական կազմակերպություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ բարձրացնելու իրենց կարողությունները Օրհուսի կոնվենցիայի երրորդ հիմնադրույթի՝ արդարադատության մատչելիության ուղղությամբ:

**1/5.2 Ձեռք բերված արդյունքներ**

Դասընթացի մանակից ՏԻՄ, գործարար ոլորտի, քաղաքացիական կազմակերպությունների ներկայացուցիչները իրազեկվել են Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության դրույթի վերաբերյալ, այդ կետի առնչությամբ ստացել պարզաբանումներ:



[http://aarhus.am/?page\\_id=11908](http://aarhus.am/?page_id=11908)

**Ենթագործողություն 1/6**

**Համագործակցել մասնավոր սեկտորի հետ՝ աջակցելով այն ոլորտներում, որոնք կապված են վերը նշված կոնվենցիաների իրականացման հետ:**



### Գործողություն 1.1.2

Օրհուս կենտրոնները կազմակերպելու են դասընթացներ և իրազեկության բարձրացման միջոցառումներ բնապահպանական որոշում կայացնողների, ՀԿ-ների, մասնագետների և այլ շահագրգիռ կողմերի համար, բարձրացնելու են իրազեկությունը Ազգային և միջազգային օրենսդրության մասին, շարունակելու են նպաստել Օրհուսի և Էսպոյի կոնվենցիաների իրականացմանը:

#### Ենթագործողություն 2/1

Շրջակա միջավայրի առնչությամբ կարևոր որոշումների կայացման գործընթացի և ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ, մամլո ասուլիսներ, դասընթացներ, իրազեկության բարձրացման միջոցառումներ՝ ոլորտի պատասխանատուների, ՔՀԿ-ների, ՉԼՄ-ների, կրթական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ:

#### 2/1.1 Կատարված քայլեր

Երիտասարդության քաղաքացիական ակտիվության բարձրացման, համայնքային բնապահպանական խնդիրների վերհանման և լուծման գործում նրանց ներգրավման ու համախմբման նպատակով, Օրհուս կենտրոնի նախաձեռնությամբ, տարածաշրջանում գործող սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդների իրավունքները պաշտպանող «Կանթեղ Արագածի» ՀԿ-ի գրասենյակում, «Իրազեկ երիտասարդներ. լիարժեք ներառում համայնքներում» ծրագրի շրջանակում, ապրիլի 10-ին անցկացվեց կլոր սեղան – քննարկում, իրազեկում Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ:

#### 2/1.2 Ձեռք բերված արդյունքներ:

Բարձրացվել է «Կանթեղ Արագածի» ՀԿ-ի ներկայացուցիչների և սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ, ամրապնդվել շրջակա միջավայրի վերաբերյալ կարևոր որոշումներ կայացնելու գործում պատասխանատու անձանց պարտականությունների մասին նրանց գիտելիքները:



10.04.2015. Դասընթաց՝ Իրազեկ երիտասարդներ. լիարժեք ներառում համայնքներում:

[http://aarhus.am/?page\\_id=9329](http://aarhus.am/?page_id=9329)

## Ենթագործողություն 2/2

ՏԻՄ-երի և մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպել իրազեկման միջոցառումներ՝ ազգային օրենսդրության և Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և դրանց համաձայնեցման վերաբերյալ.

### 2/2.1 Կատարված քայլեր

Մայիս-հունիս ամիսների ընթացքում Ապարանի կենտրոնը Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների վերաբերյալ 3 վերապատրաստման դասընթացներ է իրականացրել ՏԻՄ և գյուղի մտավորականության ներկայացուցիչների համար, Կայքի /Մուլքի/, Երնջատափի համայնքապետարանում և Մուլքի համայնքի դպրոցում.

### 2/2.2 Ձեռք բերված արդյունքներ

- Բարձրացվել է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների իրազեկությունը Օրհուսի կոնվենցիայով նախատեսված իրենց իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ, ամրապնդվել՝ զիտելիքները:
- Ամրապնդվել է տվյալ ՏԻՄ-ի ու ՕԿ-ի միջև գոյություն ունեցող կապը, ձևավորվել է նոր համագործակցության հնարավորություն.

05.06.2015. Դասընթաց Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրազեկման վերաբերյալ Կայքի /Մուլքի/ համայնքապետարանում.



[http://aarhus.am/?page\\_id=10430](http://aarhus.am/?page_id=10430)

05.06.2015. Դասընթաց Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրազեկման վերաբերյալ Մուլքիի դպրոցում.



[http://aarhus.am/?page\\_id=10430](http://aarhus.am/?page_id=10430)

07.06.2015. Դասընթաց Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրազեկման վերաբերյալ Երնջատափի համայնքապետարանում



## **Ենթագործողություն 2/4**

**Համագործակցել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման հարցերով զբաղվող այլ նախաձեռնությունների կամ ծրագրեր հետ՝ տեղական և ազգային մակարդակներում:**

### **2/4.1 Կատարված քայլեր**

Կենտրոնը հաշվետու ժամանակահատվածում սերտ համագործակցել է ԵՊՀ

Կայուն զարգացման կենտրոնի, Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն ՀԿ, Կանաչների միություն ՀԿ, «Հանուն բնության >>ՀԿ, Էկոդաշինք, և այլ ՔՀԿ-ների հետ,

### **2/4.2 Ձեռք բերված արդյունքներ**

Գործընկերային կապերի հաստատման արդյունքում, վերոնշյալ ՀԿ-ների ներկայացուցիչները աջակցել են կենտրոնին բնակչության իրավունքների ու շահերի, Էկոլոգիական իրավունքի գրագետ պաշտպանության հարցերում, փորձագիտական ու մասնագիտական խորհրդատվության տրամադրման, գիտական ու տեխնիկական տեղեկատվության, փաստաթղթերի ու հետազոտությունների արդյունքների փոխանակման, անկախ փորձաքննության անցկացման, շրջակա միջավայրին առնչվող խնդիրների վերաբերյալ դիտողությունների ու առաջարկությունների ներկայացման գործում:



09.09.15. Կանաչների միություն ՀԿ-  
Հասարակական լսում Մելիքյուղում

[http://aarhus.am/?page\\_id=12112](http://aarhus.am/?page_id=12112)



09.09.15. Էկոդաշինք ՀԿ-

Հասարակական լսում Մելիքյուղում



**Ենթագործողություն 2/5**

Նպաստել առավել ակտիվ քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործընթացներին՝ աջակցելով նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, կազմակերպել բնապահպանական խնդիրներ լուսարանող միջոցառումներ, մասնավորապես Օրհուսի կոնվենցիայի խնդիրներին առնչվող:

**2/5.1 Կատարված քայլեր**

Կենտրոնը աշխատանքներ է տարել Մելիքյուղ համայնքում գիտակից քաղաքացիական խմբերի ձևավորման գործում, որոնք խորքային են ընկալում Թուխմանուկի ոսկու հանքավայրի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը և կարող են սեփական ուժերով իրագործել իրենց իրազեկված լինելու և մասնակցելու իրավունքները:

**2/5.2 Ձեռք բերված արդյունքներ**

Մելիքյուղում ձևավորված ակտիվ քաղաքացիական խումբը իրենք պատրաստ են պաշտպանելու առողջ ու ապահով շրջակա միջավայրում ապրելու իրենց իրավունքը,

- ◆ Համայնքի բնակիչները ավագանու երկու անդամների նախաձեռնությանն անակ են գրել ՀՀ բնապահպանության նախարարին, որում իրենց կարծիքն՝ անհամաձայնությունն են հայտնել Թուխմանուկի ոսկու հանքավայրի <<Մեզո Գոլդ>>ՄՊԸ կողմից շահագործման վերաբերյալ / նամակը Բն. Նախարարություն է ուղարկվել Օրհուս կենտրոնի կողմից/:
- ◆ Համայնքի ղեկավարությունը դիմել է դատարան <<Մեզո Գոլդ>>ՄՊԸ –ին պատասխանատվության ենթարկելու հայցով, համայնքի հանդեպ պայմանագրով սահմանված ֆինանսական պարտավորությունները չկատարելու հայցով:



09.09.15. Հասարակական լուսն Մելիքյուղում: Ակտիվ բնակիչները պաշտպանում են իրենց իրավունքները: [http://aarhus.am/?page\\_id=12112](http://aarhus.am/?page_id=12112)

**Գործողություն 1.1.4**

Օրհուս կենտրոնները կնպաստեն բնապահպանական կրթության և պատասխանատու վարքագծի ձևավորմանը հասարակության շրջանում շրջակա միջավայրի վերաբերյալ, այդ թվում, Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներին:

**Ենթագործողություն 4/1**

Խթանել բնապահպանական կրթությունը և աջակցել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրավունքների իրականացմանը

**4/1.1 Կատարված քայլեր**

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների էկոլոգիական մակարդակի բարձրացմանը, կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է 3 էկոլոգիական միջոցառում Ապարանի ավագ, Ապարանի երկրորդ հիմնական դպրոցներում:

**4/1.2 Ձեռք բերված արդյունքներ**

Կենտրոնի կազմակերպած էկոլոգիական միջոցառումներին մասնակցած աշակերտները, ուսանողները, ուսուցիչները, ՀԿ ներկայացուցիչները, ստացել են բնապահպանական գիտելիքներ, իրազեկվել Կոնվենցիայի կողմից երաշխավորված իրենց իրավունքների մասին, ձեռքբերել պատասխանատվություն շրջակա միջավայրի և վայրի բնության պահպանության առումով, դարձել են առավել նախաձեռնող:



05-05-2015. Դասընթաց Ապարանի ավագ դպրոցում նվիրված բնության փետրավոր ներկայացուց.

[http://aarhus.am/?page\\_id=9711](http://aarhus.am/?page_id=9711)



18.09.2015. Դասընթաց՝ նվիրված օգոնային շերտի պահպանության միջազգային օրվան, Ապարանի երկրորդ հիմնական դպրոցում:

[http://aarhus.am/?page\\_id=12251](http://aarhus.am/?page_id=12251)

#### Ենթագործողություն 4/2

##### Աջակցել հանրային խորհրդատվության կազմակերպման գործընթացում

#### 4/2.1 Կատարված քայլեր

Կենտրոնը ճանապարհային քարտեզի 5.2 կետի համաձայն կենտրոնը աջակցել է հասարակայնության համար խորհրդատվության կազմակերպման գործընթացին, տրամադրել է համապատասխան խորհրդատվություն շրջակա միջավայրի աղտոտման, Քասաղ, Գեղարոտ գետերի ջրի աղտոտման վերաբերյալ, հանքարդյունաբերության վնասների և այլնի մասին, այդ ուղղությամբ իրականացնելով 10 գործողություն:

- ա) Խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողին Քասաղ գետի աղտոտվածության աղբյուրների, հնարավոր ռիսկերի վերաբերյալ հոդվածների հրատարակման համար:
- բ) խորհրդատվություն տրամադրում « Կանթեղ Արագածի» ՀԿ-ին, կազմակերպության կողմից նախատեսվող, բնապահպանական թեմաներով դասընթացների անցկացման վերաբերյալ .
- գ) Աջակցություն և խորհրդատվություն տրամադրում « Կանթեղ Արագածի» ՀԿ-ին փոքր ծրագրի մշակման, իրագործման, ղեկավարման աշխատանքների համակարգման և կազմակերպման գործում::

#### 4/2.2 Ձեռք բերված արդյունքներ

Քաղաքացիներն և քաղաքացիական խմբերն, կրթօջախներն, ուսանողները կենտրոնից ստացել են անհրաժեշտ խորհրդատվություն.



### Ենթագործողություն 4/3

**Իրականացվող ծրագրի նպատակներին համահունչ մշակել գործունեության աշխատանքային ծրագիր, հաշվի առնելով տարածաշրջանի բնապահպանական առանձնահատկությունները և առկա իրողությունները:**

#### 4/3.1 Կատարված քայլեր

Վերոնշյալ գործողությունների իրականացման նպատակով, կենտրոնում, տեխնիկական հանձնարարականի կենտերի հիման վրա մշակվել են տարեկան ծրագիր, աշխատանքային պլաններ, հաշվի առնելով տարածաշրջանի առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական հրատապ խնդիրները,

Աշխատանքային ծրագիրն ու ամսեկան պլանը հաստատվել է փորձագետների խորհրդի նիստով,

#### 4/3.2 Ձեռք բերված արդյունքներ:

Կենտրոնի համակարգողը պարբերաբար հաշվետվություն է ներկայացնում փորձագետների խորհուրդին կատարած աշխատանքների վերաբերյալ: Կենտրոնի փորձագետների խորհրդի նիստում տեխնիկական հանձնարարականի կենտերի վրա հիմնված մշակվել է և փորձագետների խորհրդի կողմից հաստատվել տարեկան աշխատանքային ծրագիր, որտեղ հաշվի են առնվել տարածքային առանձնահատկություններն ու տեղի բնապահպանական հրատապ խնդիրները, նախանշվել են կենտրոնի գործունեության գերակա ուղղությունները,

25.06.15.Փորձագետների խորհրդի նիստ



[http://aarhus.am/?page\\_id=10920](http://aarhus.am/?page_id=10920)

### Ենթագործողություն 4/5

**Համակարգողների համար հանդիպումների և վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ինչպես ԵԱՀԿ այլ ծրագրերի մասնագետների կողմից, նաև Կառավարական կառույցներից/Աշխատանքային հանդիպումներ Երևանում/**

#### 4/5.1 Կատարված քայլեր

Օրհուս կենտրոնի համակարգողը մասնակցել է Օրհուս կենտրոնների հանդիպումներին, նաև այլ կազմակերպությունների կողմից անցկացվող վարապատրաստման դասընթացների, մասնավորապես ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝

«Բնապահպանական արտակարգ իրավիճակների կառավարում և FEAT –ի ինտեգրումը թեմայով» թեմայով, ՄԱԿ-ի Երևանի գրասենյակում, կոնֆերանսների:

#### 4/5.2 Ձեռք բերված արդյունքներ

1. Կենտրոնի համակարգողը տեղեկացել է միջազգային գործընթացներին, այլ երկրներում ՕԿ-ների գործունեությանը, Ադեաների ռիսկի նվազեցման ոլորտում ԵԱՀԿ՝ ENVSEC համագործակցությամբ տարվող աշխատանքներին.
2. Կենտրոնի համակարգողը տեղեկացել է Օրհուսի կոնվենցիային ազգային օրենսդրության որոշ դրույթների համապատասխանության անհրաժեշտության մասին, Օրհուսի կոնվենցիայի իրականացման հետ կապված գործընթացների վերլուծությանը, միջազգային փորձին



Մասնակցություն ԱՌՆԱՊ հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում՝ «Բնապահպանական արտակարգ հրավիճակների կառավարում և FEAT –ի



10.11.15. Մասնակցություն «Հայաստանում բնական՝ հանքային եւ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ու բնապահպանական կառավարումը, խնդիրներ եւ լուծման ուղիներ» թեմայով աշխատաժողովին:

### 3. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքներ, քաղաքացիներ և եզրակացություններ

- Թուխմանուկի ոսկու հանքավայրի տարածքում << Մեզո Գոլդ>> ՍՊԸ կողմից իրականացվող ոչ օրինական շինարարական աշխատանքների վերաբերյալ Ապարանի Օրհուս կենտրոնի ահազանգի ու գրության արդյունքում Արագածոտնի մարզի բնապահպանական վարչության ու Բնապահպանական տեսչության տարածքային բաժնի կողմից կատարվել են տեսչական ստուգումներ, աշխատանքները դադարեցվել են:
- Ապարանի ջրամբարի ափամերձ տաածքում ձկների զանգվածային անկման մասին կենտրոնի ահազանգի արդյունքում մարզի բնապահպանական վարչության ու Բնապահպանական տեսչության տարածքային բաժնի կողմից կատարվել են տեսչական ստուգումներ:
- Ջրամբարի ջրի լաբորատոր հետազոտություն կատարվել է նաև անկախ փորձագետի կողմից:

#### Ստացված տեղեկատվությունը տրամադրվել է համայնքի ղեկավարությանը և բնակչությանը:

- Արագած համայնքի բնակիչները մտահոգված են Գեղարոտ գետի ջրի գույնի փոփոխության փաստի կապակցությամբ , ինչը կապում են գետի վրա գործող երկու փոքր ՀԷԿ-երի հետ:: Օրհուս կենտրոնի համակարգողը խնդրի առնչությամբ հարցումներ է ուղղել պետական համապատասխան կառույցներին և ստացված հավաստի տեղեկատվությունը տրամադրել համայնքի ղեկավարությանը և բնակիչներին:
- Արագած, Շենավան համայնքներում արձանագրված կարտոֆիլի քաղցկեղ սնկային հիվանդության բռնկումը առաջ էր բերել թե՛ կարտոֆիլի մշակությամբ զբաղվող և թե՛ կարտոֆիլ սպառող բնակիչները անհանգստությունը:

- Խնդրի առնչությամբ մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով Օրհուս կենտրոնը դիմեց Գյուղատնտեսության նախարարություն : Ստացված պատասխանը այդ հիվանդության կանխարգելման միջոցառումների մասին տրամադրվեց բնակչությանը, անցկացվեց դասընթաց համապատասխան մասնագետների ներգրավմամբ: ([հարցում, պատասխանը կայքում http://aarhus.am/?page\\_id=9985](http://aarhus.am/?page_id=9985)):
- Մելիքգյուղ համայնքի բնակիչները և ՏԻՄ –երը իրազեկված են Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքներին և պայքարում են առողջ միջավայրու ապրելու իրավունքի համար:
  1. Համայնքի մի խումբ բնակիչներ, անագանու անդամներ նամակով դիմել են ՀՀ Բնապահպանության նախարարություն, իրենց անհամաձայնությունը հայտնելով հանքը շահագործող ընկերության գործունեության վերաբերյալ:
  2. Համայնքի ՏԻՄ-երը դիմել են դատարան հանքը շահագործող ընկերությանը պատասխանատվության ենթարկելու նպատակով գյուղի նկատմամբ իրենց ֆինանսական պարտավորությունները չկատարելու փաստով:

### Քաղած դասեր

Հարկ է նշել, որ Ապարանի տարածաշրջանի գյուղական համայնքների զգալի մասում, ինչպես և նախորդ տարում

- ◆ դեռևս շատ են այն համայնքները, որոնց բնակչությունը թույլ է տեղեկացված իր իրավունքներին ըստ Կոնվենցիայի, կամ էլ գիտելիքները շատ սահմանափակ են,
- ◆ Օրհուսի կոնվենցիայի դրույթներին համայնքային շատ պաշտոնյաների իրազեկվածությունը անբավարար է,
- ◆ Բնակչությունը, համայնքի ղեկավարությունը ժամանակին չի իրազեկվում նախագծերի ՇՄԱԳ հասարակական լուսմների մասին,
- ◆ հասարակական լուսմների անցկացման եւ վերջնական որոշում կայացնելու գործընթացում հաճախ հաշվի չի առնվում բնակչության տեսակետները, կարծիքը, դիտողություններն ու առաջարկները:

Հաշվետվությունը կազմեց՝  
Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝



Նատալյա Մանուկյան

Հեռ.՝ /374 252/ 6 23 60, /374 94/ 22 49 26  
Էլ. փոստ [info\\_aparan@aarhus.am](mailto:info_aparan@aarhus.am),  
[aarhusaparan@mail.ru](mailto:aarhusaparan@mail.ru)

30.11.2015.